



Քաղաքական բացերն ու լրացումները Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում



Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները զարգացման միտումները

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը, անկախության հռչակումից անմիջապես հետո ընտրվեց հողի և գյուղա-տնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերք իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն: Արդյունքում, ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական (ընտանեկան) տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքի իրացման ու վերամշակման



բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Տնտեսավարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, և մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը, գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացրել է որոշակի ծրագրեր ուղղված սերմնարտադրությանն ու սերմապահովմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարին, տոհմային անասնաբուծության զարգացմանը, գյուղատնտեսական կենդանիների հակահամաճարակային միջոցառումներին, գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը, ոռոգման համակարգերի կատարելագործմանը, հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը, բնական կերհանդակների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիությանը և այլն: Դրանց արդյունքում դրական միտումներ կան՝ հացահատիկային տնտեսության զարգացման, կարտոֆիլի, բանջարեղենի արտադրության, ինչպես նաև այգեգործության բնագավառում:

Գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջև աստիճանաբար ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ, որոնք նախապայմաններ են ստեղծում բանջարեղենի, պտղի, խաղողի և կաթի արտադրության ծավալների ավելացման համար:

ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտներից է մանր գյուղացիական տնտեսությունների գերակշռող տեսակարար կշիռը:



Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են: Միաժամանակ անասնապահության ոլորտում անասնազվաքանակի և անասնապահական մթերքի քացարձակ գերակշիռ մասը ևս ապահովում են բնակչության տնտեսությունները: Այս հանգամանքը էապես նվազեցնում է տնտեսավարողների մրցունակությունն ու քարձրացնում ոլորտում առկա հնարավոր բնակլիմայական, սոցիալ-տնտեսական և այլ ռիսկերի քացասական ազդեցությունը: Այս հիմնախնդիրը շարունակում է տիրապետող մնալ, քանի որ դեռևս դանդաղում է գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի կատարելագործման, տնտեսությունների խոշորացման ընթացքը, որն իրենով, միաժամանակ, արգելափակում է ռիսկերի մեղմման արդյունավետ համակարգի ներդրման գործընթացը:

Ներկայումս մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.1 հա վարելահող, որը հնարավորություն չի ընձեռում իրականացնել ինչպես ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումն ու արդյունավետ տնտեսավարում, այնպես էլ գյուղտեխնիկայի օգտագործումը՝ ժամանակի և ռեսուրսների նվազ ծախսումներով:

Հայաստանի Հանրապետության նման սակավահող երկրում, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերը կազմում են 0.65 հա, իսկ վարելահողերը՝ ընդամենը 0.14 հա, գերակա խնդիր է հողային ռեսուրսների լիարժեք և արդյունավետ օգտագործումը: Հողօգտագործման հիմնախնդիրների մասին են վկայում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների տարածքների կրճատումը անցումային շրջանում, ինչպես նաև դրանց կառուցվածքային փոփոխությունները ըստ հողատեսքերի:



Գյուղատնտեսության զարգացումը պահանջում է ինտենսիվացման մակարդակի քարձրացում, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառում: Այն հանգամանքը, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը, արդեն իսկ խոսում է ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության մասին,

որը հետևանք է նաև սերմնաբուծության և տոհմային գործի կազմակերպման համակարգերի դեռևս անկատարության, պարարտացման և պայքարի ժամանակակից ձևերի անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրո-տեխնիկական կանոնների խախտման:

Լուրջ խնդիրներ են ծառացել գյուղատնտեսության տեխնիկական



ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, ցածր է սարքինության մակարդակն ու արտադրողականությունը, հետևաբար՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները:

Թեև պետական աջակցությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ, սակայն դեռևս այս բնագավառում առկա են բազում հիմնախնդիրներ: Հանրապետության 232.9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 154.2 հազ. հա:

Անցումային շրջանում լրջորեն տուժել է նաև անասնապահությունը: Բացի բնակչության վճարունակ պահանջարկի նվազումից, սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների կտրուկ սահմանափակման հետևանքով զգալիորեն կրճատվել է անասնագլխաքանակը և անասնապահական մթերքների արտադրությունը: Մասնավորապես խիստ նկատելի է գյուղամերձ արոտավայրերի գերբեռնվածությունն ու էռոզիան և հեռագնա արոտների սահմանափակ

օգտագործումը՝ հանգեցնելով լուրջ տնտեսական կորուստների ու արտավայրերի դեգրադացման:

Այս հիմնախնդիրներին ավելանում են գյուղերի իրացման շուկայի ձևավորման դժվարությունները՝ մի կողմից պայմանավորված տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, մյուս կողմից գյուղատնտեսական մթերք գնող-իրացնող ենթակառուցվածքների անկատարությամբ, դրանց ձևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարություններով: Ըստ էության գյուղատնտեսության զարգացման լուրջ մարտահրավեր է բնատնտեսության նկատելի լինելը կամ գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության ցածր մակարդակը, ինչը խոչընդոտում է ոլորտում շուկայական հարաբերությունների զարգացմանն ու քաղաքականության ներգործությանը:

Գյուղատնտեսության զարգացման լրջագույն խնդիր է ֆինանսական միջոցների նվազ մատչելիությունը՝ պայմանավորված վարկերի բարձր տոկոսադրույքներով և վարկերի տրամադրման ոչ բավարար ժամկետներով:

Կարևորագույն մարտահրավեր է գյուղերի արտահանման և ներմուծման հարաբերակցությունն ու առևտրաշրջանառության կառուցվածքում ունեցած տեսակարար կշիռը:



Կարևորագույն խնդիրներից է գյուղացիական տնտեսությունների ղեկավարների և անդամների վերապատրաստման կազմակերպումն ու որակավորման բարձրացումը, ընդհանրապես ոլորտի կադրային ապահովումը:

Գյուղատնտեսությունը որպես ռիսկային ոլորտ յուրաքանչյուր տարի զգալի կորուստներ է կրում տարբեր բնական աղետներից, ուստի կարևոր խնդիր է ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացումը և ապահովագրական համակարգի ներդրումը: Գյուղատնտեսությունում հնարավոր կորուստների ռիսկը նվազեցնելու և զարգացման ներուժը պահպանելու առումով դեռևս կարևորագույն խնդիր է մնում ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը:

Ռիսկերի մեղման առումով վերջին տարիներին որոշակի ուշադրություն է դարձվել հակակարկտային տեղակայանքների կիրառմանը և դրանց ռադիոլոկացիոն ցանցի, կարկտապաշտպան ցանցաշերտերի ներդրմանը: Որոշակի աշխատանքներ են տարվում նաև հեղեղավտանգ տարածքներում հակահեղեղային միջոցառումների և հողերի էռոզիայի դեմ պայքարի իրականացման ուղղությամբ: Իրականացված աշխատանքների հետ մեկտեղ այս բնագավառում խնդիրները դեռ շատ են:

Գեղարքունիքի մարզ

Գեղարքունիքի մարզը զբաղեցնում է 5,348 քառ կմ (ներառյալ Սեւանա լճի հայելու մակերեսը, որը կազմում է 1,270 քառ կմ) եւ գտնվում է Հայաստանի Հանրապետության արեւելքում: Մարզի աշխարհագրական բարձրությունը

տատանվում է 2,000-ից մինչեւ 3,500 մետրի սահմաններում, իսկ բնակչությունը կազմում է 238,500 մարդ (84%-ը գյուղաբնակ է): Մարզը



շրջապատում է Սեւանա լիճը՝ Հայաստանի խոշորագույն ջրային ավազանը, որն ունի քարձր տնտեսական, բնապահպանական եւ մշակութային արժեք: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի, Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնն է Գավառ քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 5348 քառ. կմ, որից գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունը կազմում է 240.033 հազ. հա: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաքային՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր:

Զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Ազգաբնակչության 67.%-ը կազմում է գյուղական բնակչությունը: Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների միջոցով: Գյուղատնտեսական հողատեսքերը ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 59.3%-ը: Գեղարքունիքի մարզում մշակվող հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկային մշակաբույսեր (43753 հա, որը կազմում է մարզի ընդհանուր ցանքատարածությունների 62.3%), կարտոֆիլ (13000 հա, 18.4%), բանջարեղեն (1668 հա, 2.3%) և կերային մշակաբույսեր (11832 հա, 16.8%): Վերջին տարիներին առաջընթաց է զգացվում նաև հատիկաընդերային մշակաբույսերի

մշակությունը

Գեղարքունիքի

մարզում

արմատավորելու

գործում (ոլոռ, սիսեռ,

ոսպ), որոնք իրենց

տնտեսական

արդյունավետությամբ

3-4

անգամ

զերազանցում են հացահատիկային մշակաբույսերին: Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետության կարտոֆիլ արտադրող կարևոր տարածաշրջաններից մեկը:

Զգալի առաջընթաց կա նաև բանջարանոցային մշակաբույսերի արտադրության և բազմամյա կերային մշակաբույսերի ցանքատարածությունների



ընդարձակման ուղղությամբ: Սևանա լիճը գոտևորող անտառներում չիչխանի մեծ պաշարներ կան, որի պտուղն օգտագործվում է ինչպես սննդի, այնպես էլ գիտական և ժողովրդական բժշկության մեջ: Սևանա լճում արդյունագործական նշանակություն ունեն սիգ, ծածան ձկնատեսակները և խեցգետինը :

42.000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում տարեկան արտադրվում է 230.000 տոննա կարտոֆիլ, 250.000 տոննա անասնակեր, 35.000 տոննա կաղամբ, 60.000 տոննա հացահատիկ, 7.000 տոննա պտուղ, 80.000 տոննա կաթ, 14.300 տոննա միս, 241 տոննա բուրդ: Անասնապահական տնտեսություններում պահվում է 107.000 գլուխ խոշոր, մանր եղջերավոր անասուն: Ալպյան բազմազան բուսաշխարհը նպաստավոր է մեղրի արտադրության համար: Մեղվաբուծությամբ զբաղվում է մոտ 500 տնտեսություն՝ տարեկան արտադրելով մոտ 300 տոննա մեղր:

Հիմնական խնդիրները

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, ափամերձ գոտու անտառների ջրածածկումը կառավարության՝ Սևանա լճի ջրի մակարդակը



վերականգնելուն ուղղված ջանքերի արդյունքում, ինչպես նաև գյուղական բնակչության շրջանում տարածված աղքատության առաջացրած հարաճուն ճնշումը բնական պաշարների վրա: Հողերի դեգրադացման հիմնական խթանները հայտնի են. չկանոնակարգված

արածեցում, հողերի սխալ մշակում, ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարում և ոռոգում, անտառազրկում, ինչպես նաև ենթակառուցվածքների ընդլայնում և հանքարդյունաբերական գործունեություն: Վերոնշյալը հանգեցնում է հողում օրգանական նյութերի և սննդանյութերի հսկայական չափով կրճատման, հողի ուժասպառության՝ դրա քիմիական և ֆիզիկական հատկանիշների

փոփոխության հետեւանքով, հողերի անկայունության, ջրերի արտահոսքի մեծացման եւ այսպես շարունակ:

Աշխատանքի հնարավորությունների սակավության պատճառով մարզում առկա է բնակչության միգրացիայի բարձր աստիճան (հիմնականում սեզոնային աշխատանքային միգրացիայի տեսքով). այս պատճառով մարզի բնակչության հիմնական մասը ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում:



Մարզի 81 հազար հեկտար վարելահողերը բաժանված են 64 հազար մանր գյուղացիական տնտեսությունների մեջ, որոնց մշակության արդյունավետությունը ցածր է: Հողի, գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման գործում կարևոր հիմնախնդիր է հողերի կամավոր միավորումը և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը: Մարզի տարբեր տարածաշրջաններում կազմակերպվել են կոոպերատիվներ, որոնք արդյունավետ գործունեություն են ծավալում:

Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները: Ցրտահարություն, կարկտահարություն, տևական երաշտ, հեղեղումներ, ահա այն ոչ լրիվ ցանկը, որոնց հետևանքով գրեթե ամեն տարի մարզի ազգաբնակչությունը տուժում է: Հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն:

Մարզի բուսաբուծության զարգացման համար շատ կարևոր է նաև գյուղատնտեսական մեքենաների և գործիքների հետևողական թարմացումը: Գյուղտեխնիկայի հավաքակազմը մարզում գտնվում է բավականին հնացած վիճակում:

Մարզի համայնքները ունեն գյուղացիական մեքենաների և գործիքների ապահովվածության միջին մակարդակ: Թեև տարեկան միջին հաշվով մարզ է ներկրվում 18-20 միավոր տեխնիկա, սակայն համայնքների գերակշռող մասը հացահատիկահավաք կոմբայնների (Ճամբարակի տարածաշրջան), անիվավոր, թրթուրավոր տրակտորների, խոտհնձիչների և հակավորող մեխանիզմների խիստ կարիք ունի: Ընդհանուր առմամբ, տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը հիմնականում գերազանցում է 20 տարվա սահմանը, առկա տեխնիկական իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին: Այս բնագավառում առաջնահերթ խնդիր է տեխնիկայով ապահովվածության մակարդակի և տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Մարզի տարածաշրջաններում ոռոգումը կազմակերպվում է մարզի թվով երեք ՋՕԸ-ների միջոցով, դրանք են <<Գավառ>> ՋՕԸ-ն, որը սպասարկում է Գավառի ամբողջ տարածաշրջանը, <<Մարտունի>> ՋՕԸ-ն, որը սպասարկում է Մարտունու ամբողջ տարածաշրջանը և <<Վարդենիս>> ՋՕԸ-ն, որը սպասարկում է Վարդենիսի ամբողջ տարածաշրջանը:



Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումը համեմատաբար լավ է կատարվում Գավառի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում՝ ինչը չի կարելի ասել Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների համար: Այդ իսկ տեսանկյունից, ինչպես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, այնպես էլ համախառն արտադրության առումով այդ տարածաշրջանները համեմատաբար ցածր արդյունքներ են ապահովում: Ի դեպ, կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունների մեծ մասը մարզում մշակվում է անջրդի հողատարածությունների վրա /8000-8500հա/:

Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության ապահովման համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով: Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է գյուղացիական տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակության կամ ծառայությունների դիմաց բնամթերքով տրված գյուղատնտեսական մթերքների ծավալների հանրագումարը:

Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության զարգացման գործում շատ կարևոր է գյուղատնտեսների մասնագիտական կարողությունների բարելավումը, ֆերմերների շրջանում խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը: Այդ ծրագրի ռազմավարությունը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.



- 1) Մարզային ուսուցողա-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղմթերքների արտադրություն և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ:
- 2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի, արմատավորման ուղղությամբ:
- 3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ:
- 4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին:

Գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունեն շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ, գյուղատնտեսությամբ

զբաղվող տնտեսավարողները հաճախ ունեն խոշոր ներդրումների անհրաժեշտություն: Վերջիններիս ապահովման հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի, միկրովարկավորման կազմակերպությունների միջոցով:

Գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարական ուղղությունները

Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության և անասնապահության ճյուղերի հետևողական ինտենսիվացման շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, որը կբերի գյուղատնտեսական տնտեսությունների եկամուտների աճին և աղքատության կրճատմանը մարզի գյուղական համայնքներում: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.



1) Հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ռոտզելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:

2) Բուսաբուծական մթերքների, հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի, արտադրության ծավալների ավելացում, ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես կարտոֆիլի արտահանման ծավալների էական ընդլայնում՝ անհրաժեշտ քանակությամբ կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութի, հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմերի ներկրման,

ինչպես նաև ոռոգման ջրի, հանքային և օրգանական պարարտանյութերի արդյունավետ օգտագործման միջոցով:

3) Բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել նոր և վերանորոգել առկա ջրամբարները, պոմպակայանները, ջրանցքերը, բարելավել ոռոգման ներտնտեսային համակարգը և վերացնել ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները:

4) Անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքի որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը:

5) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները:

6) Պատշաճ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, աջակցելով տարածաշրջաններում մասնավոր սերմնաբուծական կայուն տնտեսությունների ստեղծմանը:

7) Յուրաքանչյուր տարածաշրջանում ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդունման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով:

8) Գյուղական համայնքներում հիմնադրել գյուղատնտեսական մթերքների վերամշակման կառույցներ:

9) Աջակցել մասնագիտացված սերմնաբուծական տնտեսությունների (մասնավորապես կարտոֆիլի և հացահատիկի) ձևավորմանը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով:

10) Մարզի 5 տարածաշրջաններում տեղակայել հակակարկտային կայանքներ՝ մարզում հաճախակի կրկնվող կարկտահարությունները կանխելու նպատակով:

11) Ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների համար:

12) Ստեղծել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգը:

13) Նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, բարելավել ճյուղերի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը:

14) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով:

15) Մարզում շահագրգռել հողերի խոշորացումը և գյուղացիական տնտեսությունների միավորումը:

16) Ապահովել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

Սյունիքի մարզ

Սյունիքի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում գտնվող պատմական Սյունիքի (Սիսական) մի մասը. կազմավորվել է 1995 թվականին Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի նախկին վարչական շրջանների




միավորման արդյունքում: Սյունիքի մարզկենտրոնը Կապան քաղաքն է, բնակչությունը՝ 45470 մարդ: Սյունիքը ցամաքային տարածքով Հանրապետության ամենամեծ մարզն է, մակերեսը կազմում է 4506 քառ.կմ՝ Հանրապետության տարածքի մոտ 15.1%-ը:

Մարզը հանդիսանում է Հանրապետության խոշոր վարչատարածքային միավորներից մեկը և զբաղեցնում է աշխարհաքաղաքական ու ռազմավարական

կարևոր նշանակություն ունեցող դիրք, որն առանձնահատուկ է Հանրապետության 10 մարզերի շարքում: Հայաստանի Հանրապետության վարչական քարտեզի ֆոնի վրա մարզի տարածքը նեղ ելուստի տեսք ունի և սահմանակից է Վայոց Ձորի մարզին, Արցախին, Իրանին, Նախիջևանին, Ադրբեջանին: Սյունիքով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը: Սահմանի երկարությունը 472 կմ է, որից՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ 42 կմ, Ադրբեջանի Հանրապետության հետ՝ 382 կմ, (110 կմ՝ Նախիջևանի հետ):

Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3904մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200մ:

Սյունիքն օգտակար հանածոներով Հանրապետության ամենահարուստ



մարզն է: Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը:

Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, կան թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, բերրի սևահողեր, հարուստ անտառներ և ալպյան մարգագետիններ:

Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.5%-ը: Դրանց մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 47.7%, և վարելահողերը՝ 14.2%: Զօգտագործվող վարելահողերը հիմնականում բարձրադիր գոտում են և ունեն մեծ թեքություններ: Մարզն ունի անասնապահության (կաթ, միս) և բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ) արտադրության ուղղություն: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ՝ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների համար: Միաժամանակ՝ մարզի տարածքը, ունենալով տարբեր գոտիներ՝ ցածրադիրից մինչև բարձրադիր, ալպիական և մարգագետնային արոտավայրեր, բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար:

Ինչպես հանրապետության, այնպես էլ Սյունիքի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:



Մարզում գործում է հացահատիկային մշակաբույսերի տնկարանային տնտեսություն, որը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ապահովել է բարձր որակի սերմանյութով:

Սյունիքի մարզի գյուղատնտեսության համար առաջնահերթ հիմնախնդիր է տնտեսությունների մասնատվածությունը, հողատեսքերի փոքր չափերը: Վերջինիս հետևանքով ցածր է արտադրության արդյունավետությունը, հնարավոր չէ կիրառել անհրաժեշտ ցանքաշրջանառություն և արտադրության տեխնոլոգիաներ, դժվարություններ են ծագում գյուղատնտեսական արտադրության սպասարկումների, արտադրանքի իրացման և այլ բնագավառներում: Ստեղծված իրավիճակը պահանջում է տնտեսությունների միավորման, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների (կոոպերացիաների ստեղծում և ֆերմերային տնտեսությունների հզորացում) մշակում և ներդնում:

Մարզում առաջնային հիմնախնդիր է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

Մարզում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նորագույն տեխնիկայով հագեցվածությունը և ապահովվածությունը: Վերջին տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ֆերմերները համալրել են նորագույն տեխնիկայով: Տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների ու մի շարք այլ տեխնիկական միջոցների ապահովվածության



առումով մարզը գտնվում է միջին մակարդակի վրա: Սակայն տեխնիկայի օգտագործման արդյունավետության ուղղությամբ այստեղ կարևորվում է դրանց համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրումը: Ընդհանուր առմամբ տեխնիկական հավաքակազմը, ինչպես Սյունիքի մարզում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքն է: Մարզի 43846 հա վարելահողերից ոռոգվում են 6880 հա-ը, որը խիստ ազդում է գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակության արդյունավետության բարձրացման վրա: Խնդիրը կարգավորելու համար, մարզում վերակառուցվել և վերանորոգվել է ոռոգման ինքնահոս ջրագծերը, մայր առուները և ներքին ցանցերը, որի արդյունքում ավելացել է ոռոգման ցանքատարածությունները:

Գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունենում են շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողները հաճախ ունենում են խոշոր ներդրումների անհրաժեշտություն:

Հիմնական խնդիրները

- 1) հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը
- 2) աշխատուժի թերբեռնված օգտագործումը (գյուղատնտեսությունում ամբողջ տարին զբաղվածների տեսակարար կշիռը մարզում կազմում է 32.3 %)
- 3) գյուղատնտեսության ապրանքայնության ցածր մակարդակը (այն մարզի կտրվածքով կազմել է 48.3%, որի հիմնական պատճառը գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարությունն է, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը)

- 4) արտադրության մասնատվածությունը (գյուղացիական տնտեսությունները ունեն փոքր չափեր և դրանց խոշորացման միտումները դեռևս զգալի չեն, մեկ գյուղացիական տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 3.08 հա, իսկ պայմանական անասնագլխաքանակը՝ 4.6)
- 5) գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների սակավության հետևանքով ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք կատարումը
- 6) գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների անկատար վիճակը և արտադրության պահանջներին համապատասխան դրանց ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը
- 7) ոռոգման ներտնտեսային ցանցի անբավարար վիճակը, դրանց անհամապատասխանությունը հողօգտագործման չափերին, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայությունը, դեռևս մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը, ջուր մատակարարող և ջուր օգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների անկատարությունը, ոռոգելի տարածքների սակավությունը:
- 8) տոհմային գործի կազմակերպման անբավարար վիճակը, տոհմային տնտեսությունների բացակայությունը, արհեստական սերմնավորման տակ ընդգրկվող գլխաքանակի չափազանց ցածր տեսակարար կշիռը (կովերի 8.3%-ը
- 9) տեխնիկական ապահովվածության ցածր մակարդակը առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, դրա հետևանքով մեքենայացված աշխատանքների բարձր ինքնարժեքը և դրանց համապատասխան բարձր սակագների ձևավորումը համատեղ սկզբունքով տեխնիկայի օգտագործման կազմակերպական ձևերի գրեթե բացակայությունը
- 10) հողերի, մասնավորապես արոտների, խոտհարքների բարելավման ուղղությամբ աշխատանքների բացակայությունը
- 11) գյուղատնտեսության և սպասարկման ոլորտում կոոպերատիվների ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը

- 12) գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրական կարողությունների գրեթե բացակայությունը և դրանց ստեղծման դանդաղ ընթացքը
- 13) գյուղացիական տնտեսությունների կողմից մարքեթինգի, շուկայավարման չափազանց ցածր մակարդակը
- 14) գյուղատնտեսության վարկավորման ծավալների անբավարարությունը և վարկավորման տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առկայությունը
- 15) հակակարկտային պաշտպանության համակարգի բացակայությունը
- 16) գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական նպատակն է Սյունիքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը:



Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովումը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով կարևորվում է մարզում ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկայի ձևավորվումը, որը կօգնի նաև հանրապետության մյուս մարզերի գյուղմթերք արտադրողներին բերքի կազմակերպված իրացման և արտահանման գործում:

Սահմանված չափանիշներին համապատասխան պահեստային և սառնարանային տնտեսությունների բացակայության պատճառով, ֆերմերներն իրենց մթերքներն իրացնում են կարճ ժամանակահատվածում: Անհրաժեշտ է մարզի տարածաշրջաններում ստեղծել գյուղատնտեսական ծրագրերի աջակցության գրասենյակներ:

2. Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում

Ֆինանսական միջոցների մատչելիությունը կարևորագույն դեր ունի գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդման և գյուղարտադրության զարգացման համար: Դրա հետ կապված սկզբունքային նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտի վարկավորման տոկոսադրույքների իջեցումը և գրավի պայմանների մատչելիության ապահովումը:

3. Խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը

4. Վերամշակող ձեռնարկությունների արդյունավետության բարձրացումը և ընդլայնումը

Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող կառույցներ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, ծխախոտ ֆերմետացիոն և բուսայուղերի արտադրության փոքր արտադրամասեր, բրդի ընդունման և լվացման կետեր, հացաբուլկեղենի և հրուշակեղենի

արտադրամասեր, բնական հյութերի և խտահյութերի արտադրության, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրամասեր և այլն:

Այս նպատակին կարելի է հասնել՝ ընդլայնելով արտադրանքի իրացման հնարավորությունները, ակտիվորեն համագործակցելով գոյություն ունեցող և պոտենցիալ գնորդների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի փոքր ձեռնարկությունների ստեղծմանը: Անհրաժեշտ է նաև բանջարաբուստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ համատեղ նախապայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Մարզում ներկայումս գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արտադրություններից են «Մեղրիի պահածոների գործարանը», «Կապանի պահածոների գործարանը» /գործում է փոքր կարողությամբ/: Գյուղատնտեսական հումքի վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով:

Մարզի գյուղատնտեսական ինտենսիվ մշակության տարածքները կարկտահարությունից պաշտպանվելու համար ձեռնարկել միջոցներ մարզում



տեղադրելու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնոլոգիայով գործող ռադիոմոդեմային հեռակառավարմամբ և ռադիոլոկացիոն կայանից ղեկավարվող հակակարկտային կայաններ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):